

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

25.07.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ա.Դեմիրջյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխտյանը, Ն.Համբարձումյանը, Ա.Բաղդասարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա/ 2017- 25թթ. ռազմավարության իրականացման ընթացքի մասին  
բ/ ՀՀ Վարչապետի կողմից տրված հանձնարարականով համայնքների բյուջեների համեմատական վերլուծությունների աշխատանքների կատարման մասին  
Ա. Նալբանդյան
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին  
Ն. Սարգսյան
3. Հուլիսի 29-ի համապետական շաբաթօրյակի նախապատրաստական աշխատանքների մասին  
Հ.Թադևոսյան
- 4 ա/. « ՀՀ Լոռու մարզպետարանին գույք ամրացնելու, Գյումրու և Սպիտակի համայնքներին գույք հանձնելու մասին» ՀՀ Կառավարության 06.07.2017թ. 812-Ա որոշման վերաբերյալ  
բ/ « Համակարգչային գիտություն» առարկայի ներդրումը ԼՄ դպրոցներում  
Լ. Ասլանյան
5. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին  
Ա. Բեջանյան
6. Մարզի գյուղատնտեսության ոլորտի ներդրումային ծրագրերի ընթացքի մասին  
Հ.Մկրտչյան
7. Ամառային զրբակոչի մասին  
Ս. Ղուբաթյան
8. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին  
Գ. Հակոբյան
9. Այլ հարցեր

#### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդյանին, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

ՀՀ Լոռու մարզպետարանի 2017-25թթ. ռազմավարության ծրագիրը դարձնել առաջնային՝ ծրագրեր մշակելու և ներկայացնելու դեպքում, ուղղորդվել և առաջնորդվել սահմանված դրույթներով:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադրյանին, ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Ռազմավարության ծրագրի դրույթներից ելնելով օժանդակել և մեթոդական աջակցություն ցուցաբերել մարզի համայնքներին՝ նրանց կողմից ներկայացվող ծրագրերի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադրյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանին՝

Համատեղ համեմատական վերլուծություններ կատարել համայնքների բյուջեների սահմանման, դրանց կատարման, տարբեր տեսակի վարձավճարների գանձման, համայնքների հաստիքների սահմանման և այլ հարցերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում հրավիրել խորհրդակցություններ, կազմակերպել քննարկումներ և վերահսկել կատարման ընթացքը:

4. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ տանել մարզի համայնքներում գյուղատնտեսական ոլորտի ներդրումային ծրագրերի կազմման և ներկայացման գործում աջակցություն ցուցաբերելու հարցում:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ակտիվ մասնակցություն ունենալ հուլիսի 29-ի համապետական շաբաթօրյակին:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ